ԷՐԵԲՈՒՆԻ 2750 ԵՐԵՎԱՆ



ԷՐԵԲՈՒՆԻ ՔԱՂԱՔԸ

Ճարտարապետության դոկտոր Կ. Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արին-բերդ բլրի վրա, որը վեր է խոյանում Երևանի հարավ-արևելյան մասի Նոր-Արեշ և Վարդաշեն թաղամասերի միջև, 1950 թ. Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը սկզբում Կարմիր-բլուրի արշավախմբի ջոկատի, ապա 1952 թ.՝ Հայկական ՍՍՀ պետշինի հուշարձանների պահպանության բաժնի և Ա. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանի (Մոսկվա) հետ համատեղ կատարում է սիստեմատիկ պեղումներ։ Արին-բերդ բլրի վրա կատարվող աշխատանքները հենց սկզբից մեծ արդյունք տվեցին։ 1950 թ. այստեղ հայտնաբերվեցին Էրեբունիի հիմնադրման մասին Մենուայի որդի Արգիշտիի արձանագրությունը, Արգիշտիի որդի Սարդուրի արձանագրությունը Ari-ի կառուցման մասին, ինչպես նաև որմնանկարների հարուստ պատառիկներ։

Թեև Էրեբունի քաղաքի կառուցման մասին հայտնի էր առաջ, դեռևս Վանի տարեգրությունից, որը պատմում է քաղաքի հիմնադիր Արգիշտի I-ի գահակալության 5-րդ տարվա իրադարձությունների մասին, սակայն Արին-բերդ բլրի վրա նրա միջնաբերդի, իսկ բլրի շրջակայքում քաղաքի տեղադրությունը որոշվել է միայն հիմա։

Արգիշտին Մենուայի կրտսեր որդին էր։ Արքայական գահը բաժին չընկավ Մենուայի ավագ որդուն՝ Ինուշպուային, ինչպես ընդունված էր։ Ենթադրվում է, որ Ինուշպուան դարձավ ուրարտական պանթեոնի գլխավոր աստծու՝ Խալդիի քրմապետը երկրի կրոնական կենտրոն Մուսասիրում, թագավորական գահը զիջելով կրտսեր եղբորը[1]*։*

Արգիշտին ուրարտական աշքի ընկնող թագավորներից էր ու տաղանդավոր զորավար։ Ասորեստանի Շուլմանու-Աշարեդ IV-ի հռչակավոր զորավար Տուրտան Շամշիիլուն, որը ռազմի դաշտում բախվել էր Արգիշտիի զորագնդերի հետ, նրա մասին ասում է. «Նրա անունը սարսափելի է ինչպես ահեղ փոթորիկ, նրա ուժերը անհամար են, և ոչ մի թագավորի ձեռք չի մեկնել նա...»[2]*։ Հակառակորդի անձի գերազանցության այսօրինակ խոստովանումը հազվադեպ էր Հին Արևելքում։ Անտարակույս է, որ Արգիշտի I-ը թշնամիներին և՛ սարսափ էր ներշնչում, և՛ հիացմունք։*

Արգիշտի I-ի գործունեությունը հագեցած էր բազմաթիվ նշանակալից նախաձեռնություններով, որոնք լայնորեն հայտնի են նրա սեպագիր արձա-

---

[1] *Տե՛ս* Г. А. Меликишвили. Наири-Урарту. Тбилиси, 1954, *էջ 204։*

[2] Б. Б. Пиотровский. Ванское царство, *էջ 66։*

նագրություններից ու հատկապես նրա Խորխորյան տարեգրությունից։ Նա գահ է բարձրանում Ուրարտուի համար դժվարին ժամանակաշրջանում, երբ սկսվում են ռազմական փոթորիկները։ Հին Արևելքի հզոր և ահեղ ուժը՝ Ասորեստանը, հակամարտության մեջ է մտնում Ուրարտուի հետ։ Բանն այն էր, որ այդ ժամանակ երկրների տնտեսության մեջ սկսվել էր երկաթի լայն կիրառությունը և երկու կողմերն էլ ձգտում էին դեպի Հին Արևելքի մետաղագործության հարուստ կենտրոնները։ Ասորեստանի և Ուրարտուի միջև պայքարը բորբոքվել էր Փոքր Ասիայի արևելյան ծայրամասը հանդիսացող Սիրիային և նրա հաղորդակցության ճանապարհներին տիրանալու համար[3]։

Հաջողությամբ պայքարելով Ասորեստանի դեմ, ուրարտական թագավորները, մտնելով Ասորեստանի թիկունքը, սպառնում էին նրանից անջատել այն մասերը, որոնցով անցնում էին առևտրական ճանապարհները։ Ուրարտացիները այնքան առաջ անցան, որ ի վերջո գրավեցին Մելիտենեն ու Կոմագենը և հասան Դիալա գետի հովտում գտնվող բաբելոնական տերիտորիաները։

Սակայն Ուրարտուի ռազմական հաջողությունները անհանգստացնում էին ոչ միայն Ասորեստանին, այլև Հին Արևելքի մի շարք այլ երկրների, որոնցից նախ և առաջ պետք է հիշատակել Դիաուխին ու Մանան։ Դիաուխին նույնպես ուներ մետաղահանքեր, ինչը նպաստում էր հակամարտության ուժեղացմանը։ Սակայն Դիաուխիի, ինչպես նաև նրա կողմից Ուրարտուի դեմ հանված մերձակա ցեղերի համատեղ պայքարը ավարտվում է Տուշպայի թագավորի լիակատար հաղթանակով։ Նուլնպիսի հաղթական արդյունքով է ավարտվում Ուրարտուի երկարատև պայքարը Մանա թագավորության դեմ։

Այսպիսով Ուրարտուի համար պատմական որոշ ժամանակաշրջանում ստեղծվում է միանգամայն նպաստավոր ռազմա-քաղաքական իրադրություն։ Օգտվելով ստեղծված բարեհաջող վիճակից, Ուրարտուն արգելակում է Ասորեստանի առաջխաղացումը դեպի հյուսիս և այդ բանն անում է ինքը։ Կարճ ժամանակում Արգիշտի I-ի օրոք Ուրարտուն իրեն միացրեց այժմյան Հայկական ՍՍՀ տերիտորիան։ Ինչպես ցույց է տալիս հետագա պատմությունը, Ուրարտուն այստեղ հիմնավորվում է երկարատև ու ամուր, արմատապես հեղաբեկելով տեղական ցեղերի պատմական ճակատագիրը։

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանները կարևորագույն դեր խաղացին երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային ու ռազմական կյանքում։ Երկրի մայրաքաղաքի՝ Տուշպայի շրջանից հետո Արարատյան հարթավայրը, որը ուրարտացիներն անվանում էին Ադա երկիր, դառնում է պետության երկրորդ խոշորագույն կենտրոնը։ Դա նախ և առաջ պայմանավորված էր հողերի արգավանդությամբ և ջրային պաշարների առատությամբ։

Հայկական ՍՍՀ ներկա տերիտորիայի վրա ուրարտացիների հիմնադրած ճարտարապետական և ինժեներական կառուցվածքներից առավել նշանավորներն են աշխարհիկ ու պաշտամունքային շենքերը, ժայռային վիմափոր շինությունները, ոռոգման ջրանցքները, կոթողային հուշարձանները և այլն։ Արագորեն կատարվող շինարարության հետևանքով կարճ ժամանակամիջոցում Երևան են գալիս մի շարք խոշոր քաղաքներ, որոնց թվում՝ Էրեբունին, Արգիշտիխինիլին, Թեյշեբաինին, Խալդի աստծո քաղաքը (ներկայիս Կամո քաղաքի

---

3 Տե՛ս Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 244, նաև՝ А. А. Мартиросян, Раскопки в Головино. Ереван, 1954, էջ 103։

մոտերքը), ինչպես նաև այն քաղաքները, որոնց տեղում հետագայում գոյացան այսօրվա Արագածը, Արգավանդը, Էջմիածինը և այլն։ Սովորաբար ուրարտական քաղաքները կառուցված էին, ինչպես այդ մասին հաղորդում է Ասորեստանի Սարգոն թագավորը, տեսողական կապ ապահովող հեռավորության վրա։ Դրա շնորհիվ ստեղծվում էր մի շղթա, որը հնարավորություն էր տալիս անհրաժեշտության դեպքում խարույկների միջոցով ահազանգել սպառնացող վտանգի մասին։

Ինչպես ցույց են տալիս վերջին ժամանակների ուսումնասիրությունները, ուրարտական քաղաքները ըստ իրենց բնույթի կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ դահանիստ, վարչա-տնտեսական, ռազմական և պաշտամունքային։ Անկախ իրենց նշանակությունից, ուրարտական քաղաքները բավականաչափ ընդարձակ էին և գրավում էին 50—200 հեկտար տարածություն։ Այդ քաղաքները, որպես կանոն, փռված էին լինում բլրի շուրջը, իսկ բարձրության վրա լինում էր պարսպապատ միջնաբերդը։



Նկ. 1. Արգիշտիի արձանագրությունը Էրեբունիի հիմնադրման մասին

Այդպիսի քաղաքներից մեկն էր Էրեբունին, որը հիմնադրվել է մ. թ. ա 782 թ. Արգիշտի I-ի կողմից։ Նրա հանրահայտ արձանագրության մեջ ասված է. «Խալդի աստծո մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին, այս հզոր բերդը կառուցեց քաղաք Էրեբունի անվամբ, Բիայնիլի երկրի հզորության համար ի սարսափ թշնամի երկրների։ Արգիշտին ասում է. երկիրը ամայի էր, այստեղ ես կատարեցի գործեր հզոր, Խալդի աստծո մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին, թագավոր հզոր, թագավոր Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի»։

Էրեբունի քաղաքի հիմնադրման մասին Արգիշտի I-ը գրել է տալիս ևս երկու արձանագրություն։ Նրանցից մեկը պահպանվել է Տուշպայում, երկրի մայրաքաղաքում և իր բովանդակությամբ նման է Էրեբունիի արձանագրություններ, այն տարբերությամբ միայն, որ Տուշպայի արձանագրության մեջ Արգիշտին հայտնում է, որ Էրեբունի է տեղափոխել Հյուսիսային Սիրիայի Խուտե և Ծուպանի շրջաններից 6600 գերի զինվոր։ Հավանաբար նրանց միջոցով էլ Արգիշտի I-ը հիմնադրել է Արարատյան դաշտավայրի իր այս նոր քաղաքը։ Արձանագրությունից երևում է, թե ինչպիսի նշանակություն է տրվում քաղաքի հիմնադրմանը։ Նոր քաղաքի դերը առանձնապես մեծ էր երկրի համար նրա հյուսիսային սահմանամերձ մասում, որտեղից մասնավորապես սպառնում էին Էտիունի միության Ուդուրի ցեղերը[4]։

Քաղաքի հիմնադրման կարևորությունը այնքան մեծ էր Բիայնիլի երկրի համար, որ Արգիշտին այդ կապակցությամբ պատրաստում է հատուկ խորհրդանիշ «շաե» անունով, որի բրոնզյա կլոր պատվանդանի արձանագրությունը հաղորդում է. «Խալդի աստծուն՝ իմ տիրոջը այս շաե իբր Արգիշտին Մենուայի որդին փայտից պատրաստեց, երբ կառուցվել էր Էրեբունի քաղաքը»։ Հավանաբար «շաե» իբր հասարակ զինվոր պատկերող փայտյա այն արձանիկն է, որը գտնվել է պատվանդանից երկու մետր հեռավորության վրա Կարմիր-բլուրի միջնաբերդում։ Ժամանակի քաղաքական ու ռազմական իրադարձությունների հետևանքով արվեստի մի շարք մեծ արժեք ներկայացնող գործեր տեղափոխվել էին Թեյշեբաինի քաղաքը և ներկայումս այնտեղ էլ հայտնաբերվում են։

Եվ այսպես, Էրեբունի քաղաքի հիմնադրումը, որը տեղի է ունեցել մեզանից 2750 տարի առաջ, հաստատվում է երեք տարբեր արձանագրությամբ, որոնցով պարզվում են քաղաքի հիմնադրման ժամանակը, հիմնադիրը և հիմնադրման հանգամանքները։

Արին-բերդը ռազմական տեսակետից հարմար դիրք ունի։ Այն գտնվում է տեղանքի մյուս բարձունքների միջև և ձուլվում է լեռնային ուրվանկարներին միաժամանակ բլրի զագաթից հիանալի պիտվում են Արարատյան դաշտավայրը՝ Արգիշտիխինիլի քաղաքով, մի շարք այլ բնակավայրեր, ինչպես նաև Էրեբունիի հեռավոր կամ մերձակա մատույցներին հասնող գլխավոր մայրուղիները։

Միջնաբերդը, ինչպես այդ ցույց են տալիս հատկապես 1967 թ. պեղումները, ամրացված է եղել հզոր բերդապարիսպներով, որոնք հարավ-արևելյան հատվածում ունեցել են երեք շարք և նրանցում մեկ ընդհանուր առանցքի վրա երկու մուտք։ Մյուս, հատկապես զառիթափ մասերում, պարիսպները ունեցել են երկու գիծ, որոնք բնորոշվում են իրենց շարքերի մեծածավալ քարերի բեկորներով (տեղ-տեղ մինչև վեց խորանարդ մետր չափ)։ Միջնաբերդի պարիսպների ներկայիս պահպանված բարձրությունը մոտ 5 մետր է, երբեմնի 12 մետր հավանական բարձրության փոխարեն։ Պարիսպների գետնախարիսխային շարքերը տուֆից էին կամ բազալտից, վերևինները՝ հում աղյուսից։ Պատերը իրենց ամբողջ երկարությամբ ունեին որմնահեցեր, դասավորված ճարտարապետական համաչափությունների հիման վրա։ Միջնաբերդը կազմված է պալատական, պաշտամունքային ու տնտեսական մասերից։ Պետք է

4 Տե՛ս А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, էջ 235։

ենթադրել, որ նա հարմարեցված է եղել երկարատև պաշտպանության համար, քանի որ բացի հզոր պարիսպներից եղել են հացահատիկի պաշարներ ունեցող շտեմարաններ, ինչպես նաև խողովակաշար՝ ջրի համար։



Նկ. 2. Միջնաբերդի առաջին պարիսպը



Նկ. 3. Միջնաբերդի արտաքին սյունասրահի մնացորդները

Միջնաբերդի միջին մասը հրապարակն էր, որի եզրագիծը կառուցապատված էր մեկ հարկանի շենքերով, այն է՝ Խալդիի տաճարով, Արգիշտի I-ի պալատով ու տնտեսական այլ կառույցներով։ Հրապարակի ճարտարապետությունը, ամբողջությամբ վերցրած, ստեղծվել է մի կողմից պալատի հզոր պատերի ու հոծ որմնահեցերի, մյուս կողմից՝ տաճարի շքամուտքի փայտյա նրբագեղ սյունաշարի հակադրության զուգորդմամբ։ Հենց այս ձևերն էլ հրապարակին հաղորդում են ուղղահայաց սլացիկություն, քանի որ հրապարակի առանցքի վրա կանգնած տաճարի սյունասրահը ուներ 12 վեր խոյացող սյուն։ Եվ եթե նկատի ունենանք, որ ինչպես սյունասրահի, այնպես էլ մի քանի այլ շենքերի պատերը ներկված էին բաց կապույտ գույնով և զարդարված պայծառ որմնանկարներով, պարզ կդառնա այն գեղեցիկ տեսարանը, որ ներկայացնում էր հրապարակը Արարատ լեռան ուրվանկարի վրա։

Արին-բերդի միջնաբերդի ամենախոշոր կառույցը Արգիշտի I-ի պալատն է։ Նրա շքամուտքի մոտի արձանագրության մեջ կարդում ենք, որ Արգիշտին «այս հոյակապ պալատը կառուցեց»։ Իրոք պալատը հոյակապ էր։ Հավանաբար այն եղել է Արգիշտի I-ի աթոռանիստը՝ Արարատյան հովտում նրա գտնվելու ժամանակ։ Պարզվում է նաև, որ արդեն Արգիշտիի կենդանության օրոք պալատն իր մեծությամբ այլևս չէր բավարարում նրա բնակիչների պահանջները։ Այդ իսկ պատճառով ինքը՝ Արգիշտին պալատին կից կատարում է նոր կառուցումներ, որոնց մեջ՝ վիթխարի չափերի (12,5×39,00 մ) մի սյունազարդ, ամբողջովին որմնանկարներով ծածկված դահլիճ։

Ուրարտական սեպագրերում հաճախ կարելի է հանդիպել տեղեկությունների պալատական ու պաշտամունքային կառույցների կողք-կողքի շինարարության մասին։ Արին-բերդում Արգիշտի I-ի պալատը կառուցված է սուսի կոչվող տաճարի հետ։ Որոշ ուսումնասիրողներ, հենվելով ասորեստանյան օրինակների վրա, այն կարծիքն են հայտնում, թե քանի որ հասարակության և աստծո միջև միջնորդի պարտականությունները դրվում էին անմիջապես թագավորի վրա, հետևապես նպատակահարմար էր, որ տաճարները կազմեին պալատական կառուցվածքների անբաժանելի մասը։ Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա այստեղ թագավորները ոչ միայն միջնորդներ էին համարվում, այլև հավասարվում էր նրանց արյունակցական կապը աստվածների հետ։ Նշված իրադրությունը վճռական նշանակություն ունեցավ հին արևելյան պալատների ճարտարապետության պաշտոնական ձևերի, հարդարանքի ու ճոխության համար։ Այդ նպատակով օգտագործվում էին երկրի բոլոր միջոցները, լայնորեն գործի դրվում լավագույն վարպետների ջանքերը։

Էրեբունիի պալատը այնքան լավ է պահպանվել, որ 3—4 մետր բարձրությամբ մնացած պատերը ուրվագծում են պալատի ընդհանուր հատակագիծը, բակերը, հանդիսասրահները, պաշտամունքային շենքերը և այլն։ Այստեղ ներքին սյունազարդ (պերիստիլ) բակի շուրջը խմբավորված են պալատի բոլոր գլխավոր կառույցները, որոնք սերտորեն կապված են նրա հետ։ Սակայն գլխավորը սուսի պալատական տաճարն է, կառուցված սրահի հարավ-արևմտյան մասում։ Տաճարի վերաբերյալ հակիրճ տեղեկություններ ենք գտնում նույն բովանդակությունն ունեցող երկու տարբեր արձանագրություններում, որոնք տեղավորված են շքամուտքի երկու կողմերին։ Արգիշտի I-ի թողած այս արձանագրությունը հաղորդում է տաճարի կառուցման, տաճարը Իուբշա (հնարավոր է նաև՝ Բուարշա) աստծուն նվիրելու մասին։ Պրոֆեսոր Դ. Մելիքիշվիլին Բուբշային համադրում է խեթական պանթեոնի աստծո հետ, իսկ Էրեբունիում նրա պաշտամունքը կապում է Խատե և Ծուպանի երկրներից այստեղ վերաբնակեցված գերիների հետ։

Սուսի տաճարը իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծով մի կառուցվածք, շուրջ 40 քառ. մ ներքին տարածությամբ, որը նախատեսված էր սահմանափակ թվով մարդկանց, հավանաբար միայն պալատականների համար։ Այս փոքրիկ կառուցվածքի տարածական սահմանները, որ ներփակվում էին պատերով, պետք է ընկալվեին իբրև միապաղաղ ու ծանր զանգված։ Պատերի հզորությունը առանձնապես զգալի էր գոան բացվածքում. այստեղ նրա 1,05 մ բացվածքի դիմաց պատերի հաստությունը հասնում է 2,80 մետրի։ Դրա շնորհիվ անցուղու երկարությունը կամ ներքնամասը արտաքին որմից բաժանող տարածությունը, խուլ պատերի հետ միասին, շինությանը հաղորդում է ստատիկ զանգվածեղության արտահայտություն, որի համար փոքր մանրամասների պլաստիկան արդեն չէր կարող համապատասխան դեր կատարել։

Տաճարի արտաքին ճարտարապետական ձևերը, պահպանված մնացորդներից դատելով, իրենցից ներկայացնում էին զուսպ ծավալներ, որոնք անմիջականորեն բխում էին կառուցվածքի ուղղագիծ հատակագծից։ Վերջինիս բնորոշ արտահայտությունը նրա խիստ ճարտարապետական համաչափությունն է (5×8)։ Տաճարի առջևում գտնվում էր նրա էությանը համապատասխանող զոհարանը։ Սակայն խիստ ուշագրավ է, որ զոհաբերությունները կատարվել են ոչ միայն նրա առջևում կամ ներսում, այլև սենյակներից մեկում, որը գտնը-

վում է ներքին սյունաշարդ բակի հյուսիս-արևելյան անկյունում։ Բացի դրանից, ներքին բակի շուրջը հանդեսների համար աշխարհիկ դահլիճների շարքում տեղավորված են գինու կարասների երկու սենյակ։ Ըստ էության տնտեսական նշանակություն ունեցող այդ սենյակները, որոնք անմիջապես ելք ունեն դեպի ներքին բակը, որտեղ տեղի էին ունենում զոհաբերությունները, հավանաբար այլ նշանակություն են ունեցել։ Այսպես՝ հանրահայտ է գինու գործածությունը ուրարտացիների պաշտամունքային արարողություններում։ Այդ մասին ուղղակի տվյալներ կան հնագույն աղբյուրներում։ Սարգոն II-ի կողմից Մուսասիրի տաճարում գրված ավարի մեջ, օրինակ, հիշատակվում է նաև «բրոնզե կափարիչով ութսուն չափ ջրի տարողությամբ բրոնզե աման, որը Ուրարտուի թագավորները խալդի աստծո առջև զոհաբերություններ կատարելիս լցնում էին հեղման գինով»[5]։ Այստեղից կարող ենք եզրակացնել, որ պերիստիլ բակն իր նշանակությամբ հանդիսացել է մասամբ աշխարհիկ, մասամբ պաշտամունքային կառույց ուրարտական պալատական կոմպլեքսում։ Պերիստիլ բակի պարագծով կառուցված առավել նշանակալից ներքին տարածությունը 7,30×16,10 մ չափերի հասնող դահլիճն է, որը իր մուտքի համաչափ սենյակներով ստեղծում է հատակագծային խիստ հորինվածքի և ճարտարապետական տարածական ձևերի հանդիսավորություն։ Դահլիճի պատերը ծածկված են եղել գունեղ որմնանկարներով, որոնցից շատ մոտիվներ լայն տարածում ունեն նաև բրոնզյա զարդաձևերի մեջ։ Այստեղ պատկերված են արմավիկներ, աստիճանաձև աշտարակիկներ, սրբազան ծառեր ու պաշտամունքի սպասավորներ, գոգավորված քառակուսիների մոտ կանգնած առյուծներ, ծնկաչոք ցուլեր և մի շարք այլ նկարներ։ Էրեբունիի այս որմնանկարների ընդհանուր հորինվածքը շատ կողմերով հիշեցնում է այն զարդանկարները, որոնք 70 տարի անց հանդես եկան ասորեստանյան Սարգոն II թագավորի գահասրահի պատերին՝ Դուր-Շառուկինի պալատում։ Այս իրողությունը որոշակիորեն մատնացույց է անում հիշյալ հուշարձանների հորինվածքային մոտիվների ծագման ընդհանուր ակունքը, գուցե և ամբողջությամբ վերցրած նրանց թեմատիկ մտահղացումների ընդհանրությունը։

Հիշելու արժանի է այն միջանցքը, որ գտնվում է նախադահլիճի ու կարասների սենյակի միջև և տանում է պերիստիլ բակից դեպի պալատի հյուսիսային հատվածի խորքը, ուր տեղավորված են տնտեսական նշանակություն ունեցող այն սենյակները, որոնք խմբված են արդեն երկրորդ բակի շուրջը։ Այս սենյակները, դասավորված լինելով սարալանջի թեքության վրա, սերտորեն միահյուսված են տեղանքին։

Պալատի մնացած հատվածը հետագա ժամանակների հարակից կառուցվածք է, որի միջին մասը զբաղեցնում է մեծ չափերի մի դահլիճ (12,0×39,0 մ)՝ երկարության առանցքի վրա դասավորված 5 սյուներով, որոնց պահպանված խարիսխները իրենց վրա կրում են Արգիշտիի շինարարական սեպագիրը տվյալ հատվածի կառուցման մասին։ Հավանաբար դահլիճը ծառայում էր պաշտոնական ընդունելությունների ու հանդիսավոր արարողությունների համար։ Նրա սյուների համաչափ դասավորությունը ստեղծում էր տարածության խորության տպավորություն, ընկալման խստություն, որով դահլիճը ստանում էր մոնումենտալ բնույթ։ Սակայն միևնույն ժամանակ դահլիճը հիանալի կեր-

[5] Б. Б. Пиотровский. Урарту Ереван, 1944, էջ 226։

ով զարդարված էր ճոխ ու գունեղ որմնանկարներով։ Մոտ 4 մետր բարձրություն ունեցող այս որմնանկարները կազմված էին ինչպես աշխարհիկ, այնպես էլ պաշտամունքային բովանդակություն ունեցող հորինվածքներից։ Ամենահետաքրքիրը, անշուշտ, ինչպես նաև նորը, որսի տեսարանն է տեղանքի իր տարբեր արտահայտությամբ (թփուտներով, եղեգնուտով, անտառով և այլն), զանազան կենդանիներով (ցուլեր, փոքրիկ ցլիկ, բծավոր ընձաուց և այլն), որոնց մի մասը պատկերված է սրընթաց վազքի մեջ։ Որսի տեսարանի կենտրոնական տարրը մարտակառքն է, որի վրա որս անողը հավանաբար տոհմիկ մի անձնավորություն է։ Որսի տեսարանի հորինվածքի ընդհանրությունը եգիպտական համանման հուշարձանների հետ ուրարտական արվեստը հասցնում է հին արևելյան վարպետների ստեղծագործական նվաճումների մակարդակին։

Նկ. 4. Որմնանկարի նմուշ

Այս դահլիճի որմնանկարների մյուս աշխարհիկ թեման հողի մշակության տեսարանն է։ Նրանում կարող ենք տեսնել, թե ինչպես զլխարաց, դանդուր մազերով հողագործը թևերը բշտած, ձեռքում ամուր բռնած բարձրացրած մտրակը, բշում է լծված եզներին։

Պալատի ճոխությունը հավանաբար պայմանավորված էր այն անհրաժեշտությամբ, որ առաջանում էր զանազան երկրների դեսպանությունների հաճախակի այցելություններից, քանի որ Ուրարտուն գերիշխող դիրք էր գրավել առաջավոր Ասիայում, իսկ Էրեբունին դարձել էր հարևան հյուսիսային պետությունների սահմանագլխի խոշորագույն քաղաքը։

Բացի պալատից, Էրեբունիի միջնաբերդի կառուցապատման մեջ կարևոր տեղ է գրավում նաև խալդի աստծո տաճարը։

Ուրարտուում ստեղծված են տաճարային շենքերի տարբեր տեսակներ, որոնց մասին տեղեկություններ են պահպանվել սեպագիր արձանագրություն-

ներում։ Սակայն խիստ սահմանափակ են նրանց պահպանված մնացորդները, որոնք իրենց հատակագծերով ուղղանկյուն են՝ երկայնական և լայնական զարգացմամբ, ինչպես նաև քառակուսի։ Այս առումով Էրեբունիի Խալդի աստծո տաճարը իրենից ներկայացնում է լայնական զարգացման ուղղանկյուն կառուցվածքի տիպար, որը հավանաբար իր ձևերի համար որպես նախատիպ ունեցել է հին արևելյան բնակելի տան հայտնի բիտ-խիլանի հորինվածքը։ Տաճարը կազմված է մի մեծ դահլիճից (7,20×37,0 մ), կից օժանդակ սենյակից, սյունասրահից (որտեղ պահպանված են 12 սյուն), հիմնախարիսխներից և գիկկուրատից։ Վերջինիցս, համաձայն հին արևելյան սովորության, ունեցել են միայն երկրի գլխավոր աստծուն նվիրված տաճարները։ Ներկա դեպքում այս տաճարը նվիրված էր Խալդի աստծուն։ Այդ, ի միջի այլոց, ապացուցվում է նաև Արգիշտի I-ի վահանով, որը գտնվել է Կարմիր-բլուրում և, համաձայն նրա վրա եղած սեպագրի, նվիրաբերվել էր Էրեբունիում գտնվող Խալդիի տաճարին։

Էրեբունիում տաճար կառուցելու մասին խոսվում է միայն Արգիշտի I-ի վերջերս գտնված արձանագրության մեջ, որտեղ ասված է «E» տան կառուցման մասին, որից հետո հիշատակվում է պալատի կառուցումը։ Եվ քանի որ պալատական տաճարը Արգիշտիի արձանագրության մեջ անվանված է susi, հետևաբար «E» տուն պաշտամունքային կառուցվածքը կարող է լինել միայն մեր կողմից քննարկվող Խալդիի տաճարը։ Նկատենք նաև, որ արձանագրության մեջ տաճարը հիշատակվում է պալատից առաջ։ Միջնաբերդի կառուցվածքների շարքում Խալդիի տաճարը առավելապես շեշտված է իր ձևերի մոնումենտալությամբ և դասավորությամբ։ Հետևաբար Էրեբունիի Խալդիի տաճարը ուրարտական սեպագիր արձանագրությունների «E» տունն է։

Այստեղ հարկ է նշել, որ Էրեբունիի պեղումները պարզել են ուրարտական սեպագրերի «E»-տուն, «E-gal», «susi», «Ari» տերմինների ճարտարապետական իմաստը։

Էրեբունիի տաճարի գլխավոր ճակատի հորինվածքում տեսնում ենք, թե ինչպես նրա մոնումենտալ պատերը հետ են մղվում և առաջին պլանի վրա հայտնվում է փայտյա թեթև սյունաշարը, որը կազմված էր երկու շարքում տեղավորված 12 սյուներից։ Իրենց ուղղահայաց սլացիկությամբ նրանք գլխավոր ճակատին հաղորդում էին զգալի թեթևություն և հակադիր զուգորդության մեջ էին գտնվում մոնումենտալ գիկկուրատի հետ։ Սյունասրահը անհրաժեշտ էր ինչպես պաշտամունքային նպատակների (զոհաբերությունների), այնպես էլ աշխարհիկ հավաքույթների համար, քանի որ անմիջապես դուրս էր գալիս միջնաբերդի հրապարակը։ Սյունասրահներում զոհաբերությունների կատարումը հայտնի էր դեռ Միտանիի ժամանակներից և հաստատվում է Թել-Խալաֆի տաճարով։

Խալդիի տաճարը, ինչպես և պալատը, շքեղորեն զարդարված էին ճոխ որմնանկարներով, որոնց մեջ հայտնաբերված է Խալդիի կերպարը՝ առյուծի վրա կանգնած։

Ուրարտական պաշտամունքային ճարտարապետությունը մեծ նշանակություն ունեցավ հին Հայաստանի քրիստոնեական դարաշրջանի պաշտամուն-

---

6 E-ն կարող է լինել նաև տուն (պալատ), քանի որ պալատական խարիսխների վրա կան E-ի նշանները։

յային ճարտարապետության զարգացման համար, որի ակունքներում, իբրև ճարտարապետական հիմնական ձև, հայտնվում է արդեն մեզ ծանոթ բազիլիկային ձևը։ Կարելի է հաստատորեն ընդունել, որ հին Հայաստանի վաղ քրիստոնեական պաշտամունքային կառուցվածքների զարգացման ընթացքի մեջ ներգրավվել են նաև ուրարտական տաճարային ճարտարապետության ավանդները։

Մ. թ. ա. VI դարը Ուրարտուի պատմական կյանքի եզրափակիչ փուլը դարձավ։ Ուրարտուն դադարեց գոյություն ունենալուց՝ բախվելով Մարաստանի հետ։ Շուտով Ուրարտուի տարածությունների վրա սկսեց կազմավորվել հայ ժողովուրդը, որը ընդունելով ինչպես Ուրարտուի, այնպես էլ տեղական ցեղերի մշակութային ժառանգությունը, հիմք էր դնում իր ինքնուրույն մշակույթին։

Աքեմենյանները իրենց տիրապետության ժամանակաշրջանում հարուստ ավանդություններով այս քաղաքի մշակութային ժառանգության քուրայում սկսեցին ստեղծել իրենց ճարտարապետական ձևերը։ Միջնաբերդում նրանց կատարած վերակառուցումների կապակցությամբ մեծապես փոխվել է նրա հատակագծային հորինվածքը։ Վերակառուցվել են Խալդիի տաճարը, պալատի էլենտրոնական մասը հանդիսացող պերիստիլ բակը իր սուսի տաճարով։ Վերակառուցելով տաճարի սյունասրահը, Աքեմենյանները ստեղծում են հսկայական, 30 սյունանոց ապադանան՝ պաշտոնական ընդունելությունների դահլիճը, այնպես, ինչպես այն օգտագործվում էր Պերսեպոլսում։ Կառուցվածքի հիմնական տարրը փայտե սյուներն էին, որոնց համաչափ հաջորդականությունը եակատով ու խորությամբ ստեղծում էր նրա տարածական սահմանների հստակ հորինվածք ու հանդիսավորություն։ Այժմ արդեն միանգամայն որոշակի է, որ ապադանաները, որոնք ունեին փայտյա թեթև սյուներ, ծագել են ոչ թե եգիպտական տաճարների հիպոստիլ դահլիճների քարե ծանր սյուներից, այլ խեթական աշխարհում, որը հաստատվում է հինավուրց Խատուշայի միջնաբերդում պեղված դահլիճի 25 սյուներով։ Սակայն նույնանման մի այլ դահլիճի հայտնաբերումը նաև Ալթին-թեփեում ըստ էության Ուրարտուին ներգրավում է միջանկյալ օղակի մեջ, որի միջոցով այդ ձևերը կարող էին թափանցել Իրան։ Բանն այն է, որ իրանական ապադանաների ստեղծման ժամանակ խեթական շենքերը արդեն գոյություն չունեին. հակառակ ուրարտական կառուցվածքների, որոնք կային որպես գործող շենքեր։

Մյուս վերափոխությունը վերաբերում է սուսի տաճարին, որը դառնում է կրակի տաճար, արմատապես վերափոխվելով իր հատակագծում։ Կրակի մյուս տաճարը, որ ի հայտ է եկել 1957—58 թթ. պեղումների ժամանակ, երեք սենյակից բաղկացած բարձր պատերով կառուցվածք է։

Այսպիսով Էրեբունին հանդիսանում է Հայաստանի այն միակ վայրը, որտեղ պահպանվել են այժմ մեզ հայտնի աքեմենյան ճարտարապետական կառուցվածքները։

Սակայն Աքեմենյանների դարաշրջանում չփոխվեց ճարտարապետության զարգացման ընդհանուր բնույթը, քանի որ տեղական շինարարական ավանդույթները ավելի կայուն էին։ Այդ ավանդույթները պայմանավորված էին ուրարտական կառուցողական արվեստի պոտենցիալ հնարավորություններով, որոնք որոշակիորեն արտահայտվեցին հին Հայաստանի շինարարական կյանքի ողջ գոյության ընթացքում։

Հետագայում հայկական ճարտարապետությունը ընթացավ նոր կառուցվածքային լուծումների որոնման ճանապարհով, որի արդյունքը հանդիսացան «միդիս» շարվածքը և նրա վրա հիմնված կամարավոր և գմբեթային համակարգերը։ Այդ պատճառով այժմ արդեն չի կարելի այդ ճարտարապետությունը քննել հին արևելյան մշակույթի հետ նրա ունեցած անխզելի կապից անկախ։ Իր բազմաթիվ դրսևորումներով էրեբունին այդ շղթայի շատ կարևոր օղակներից մեկն է։

ГОРОД ЭРЕБУНИ

Доктор архитектуры К. Л. ОГАНЕСЯН

(Резюме)

На юго-восточной окраине Еревана возвышается холм Арин-берд с древней цитаделью на нем, где в 782 г. до н. э. урартский царь Аргишти, сын Менуа, оставил две идентичные по содержанию клинописи, повествующие об основании вокруг холма города. В клинописи сказано: *«Бога Халди величием Аргишти, сын Менуа, эту мощную крепость построил, установил для нее имя Эребуни, для могущества страны Биайнили и для устрашения вражеских стран. Аргишти говорит... земля была пустынной, могучие дела я там совершил...»*. Еще две клинописи об основании Эребуни оставил Аргишти I: одну в Тушпе — столице государства, другую — на цилиндрической подставке от статуэтки из раскопок Кармир-блура. Надпись на цилиндре гласит: *«Богу Халди, господину своему этот предмет из дерева (шае) Аргишти, сын Менуа, изготовил, когда Эребуни был построен»*.

Эребуни — древнейшее ядро Еревана и древнейшая форма его наименования, видоизмененная в веках, как Эребуни—Эревуни—Ереван, непрерывная историческая жизнь которого в нынешнем году завершила свои 2750 лет.

Раскопки города Эребуни выявили остатки некогда величественной архитектуры, интересный археологический материал, характеризующий культуру Эребуни, а также значительные памятники урартской эпиграфики, содержащие ценные сведения по истории Урарту VIII в. до н. э. Цитадель города Эребуни, укрепленная мощными стенами, сохранила до наших дней ряд своих монументальных построек—дворцы, храмы, складские помещения и пр. Дворец имел внутренние дворы, большие и малые залы, в том числе и колонные. Как дворец, так и храмы цитадели имели богатую роспись в своем интерьере, в том числе очень интересные и впервые ставшие известными в урартском искусстве росписи светской тематики. Эребуни, кроме того, является тем редким узловым пунктом древности, той гранью древнего Востока и сменившей его эпохи, где встречаются закончившее свою историческую жизнь зодчество Урарту и зарождающееся зодчество ахеменидов, вобравшее в себя все доступные ему предшествующие культурные достижения древнего мира.